

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԲԵՌՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ
ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ 1999 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 7-ԻՆ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ
ՓՈՓՈԽՈՂ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Իտալիայի Հանրապետության Կառավարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող Կողմեր,

նպատակ ունենալով դյուրացնելու իրենց պետությունների տարածքներում կամ տարածքներով տարանցմամբ իրականացվող՝ ուղևորների և բեռների միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումները, կարգավորելու և բարձրացնելու դրանց արդյունավետությունը,

համաձայնեցին փոփոխել «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Իտալիայի Հանրապետության Կառավարության միջև ուղևորների և բեռների միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումների մասին» 1999 թվականի օգոստոսի 7-ին Երևանում ստորագրված համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալ ձևով.

Հոդված 1

Համաձայնագրի 11-րդ հոդվածը լրացնել նոր՝ 4-րդ կետով, հետևյալ բովանդակությամբ.

«4. Եթե բեռնափոխադրումը իրականացվում է երկու տրանսպորտային միջոցների համակցմամբ (կցորդ փոխադրող բեռնատար կամ կիսակցորդ փոխադրող քարշակ), ապա թույլտվությունը հնարավոր է օգտագործել նաև համակցությունը կազմող երկու տրանսպորտային միջոցներից միայն մեկի համար (քարշակի կամ քարշվող տրանսպորտային միջոցի համար)՝ պայմանով, որ բոլոր ներգրավված տրանսպորտային միջոցները գրանցված լինեն Պայմանավորվող Կողմերից որևէ մեկի պետության տարածքում: Հետադարձ ուղևորության ընթացքում հնարավոր է փոխարինել կցորդը (կամ կիսակցորդը)՝

թույլտվության վրա նշելով դրա համարանիշը մեկնման ուղևորության ժամանակ օգտագործված կցորդի (կամ կիսակցորդի) համարանիշից հետո:»:

Հոդված 2

Համաձայնագրի 25-րդ հոդվածի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն Համաձայնագրի կիրառման համար Պայմանավորվող Կողմերի իրավասու մարմիններն են՝

Հայաստանի Հանրապետության Կառավարության դեպքում՝ Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը,

Իտալիայի Հանրապետության Կառավարության դեպքում՝ Ենթակառուցվածքների և տրանսպորտի նախարարությունը:»:

Հոդված 3


Սույն Արձանագրությունը և Համաձայնագիրը կիրառվում են Պայմանավորվող Կողմերի պետությունների ազգային օրենսդրությանը և կարգավորումներին ամբողջովին համապատասխան, ինչպես նաև կիրառելի միջազգային իրավունքի նորմերին, այն միջազգային կազմակերպությունների շրջանակներում պարտավորություններին համապատասխան, որոնց անդամ են Պայմանավորվող Կողմերը, իսկ իտալական կողմի համար՝ Եվրոպական միությանն անդամակցությունից բխող պարտավորություններին համապատասխան:

Հոդված 4

Սույն Արձանագրությունը կազմում է Համաձայնագրի անբաժանելի մասը և ուժի մեջ կմտնի վերջին ծանուցման ստացման հաջորդ օրվանից, որով Պայմանավորվող Կողմերը միմյանց պաշտոնապես կտեղեկացնեն դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին:

Կատարված է Երևան քաղաքում, 2018 թվականի հուլիսի 31-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, իտալերեն և անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն Արձանագրության դրույթների մեկնաբանման ընթացքում որևէ տարաձայնություն առաջանալու դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝



ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝



PROTOCOL AMENDING
THE AGREEMENT ON INTERNATIONAL ROAD TRANSPORT OF PASSENGERS
AND GOODS
BETWEEN THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA AND
THE GOVERNMENT OF THE ITALIAN REPUBLIC, SIGNED ON 7 AUGUST 1999

The Government of the Republic of Armenia and the Government of the Italian Republic, hereinafter referred to as the Contracting Parties,

intending to facilitate, regulate and increase the efficiency of international road transportation of passengers and goods carried out or transited through the territories of their States,

have agreed to modify the Agreement between the Government of the Republic of Armenia and the Government of the Italian Republic on the International Road Transport of Passengers and Goods done at Yerevan on 7 August 1999 (hereinafter referred to as the Agreement) as follows:

Article 1

To add a new paragraph 4 in Article 11 of the Agreement as follows:

“4. In case of a freight transport done by a combination of two vehicles (truck hauling a trailer or road tractor hauling a semi-trailer) it is possible to use the authorization also for only one of the two vehicles composing the combination (for the motorized vehicle or for the hauled vehicle) under condition that all vehicles involved are registered in the territory of one of the Contracting Parties. In the return trip it is possible to substitute the trailer (or semi-trailer) by indicating its plate number on the authorization next to the plate number of the trailer (or semi-trailer) used in the outgoing trip.”.

Article 2

To replace paragraph 2 of Article 25 as follows:

“2. The relevant Authority of the Contracting Parties for the implementation of this Agreement is:

for the Government of the Republic of Armenia – *the Ministry of Transport, Communication and Information Technologies,*

for the Government of the Italian Republic - *the Ministry of Infrastructures and Transport.*”.

Article 3

Both this Protocol and the Agreement shall be applied in full compliance with the national laws and regulations of both Contracting Parties, as well as in conformity with applicable international law, with the obligations in the framework of international organizations of which the Contracting Parties are members and, as for the Italian Party, with those ensuing from its membership of the European Union.

Article 4

This Protocol shall form an integral part of the Agreement and shall enter into force from the first day that follows the day of receipt of the latest notification through which the Contracting Parties will officially communicate each other the fulfillment of the internal procedures necessary for its entry into force.

Done at Yerevan, on 31st of July, 2018, in two originals, each in the Armenian, Italian and English languages, all texts being equally authentic. In case of divergence in the interpretation, the text in English shall prevail.

FOR THE GOVERNMENT OF THE
REPUBLIC OF ARMENIA



FOR THE GOVERNMENT OF THE
ITALIAN REPUBLIC



PROTOCOLLO EMENDATIVO
DELL'ACCORDO TRA IL GOVERNO DELLA REPUBBLICA DI ARMENIA ED IL GOVERNO DELLA
REPUBBLICA ITALIANA SULL'AUTOTRASPORTO INTERNAZIONALE DI PASSEGGERI E DI
MERCI, FIRMATO IL 7 AGOSTO 1999

Il Governo della Repubblica di Armenia e il Governo della Repubblica Italiana, di seguito denominati "Parti Contraenti"

con l'intenzione di facilitare, regolare e aumentare l'efficienza del trasporto stradale internazionale di passeggeri e di merci trasportate o in transito attraverso il territorio dei loro Stati,

hanno concordato le seguenti modifiche all'Accordo tra il Governo della Repubblica di Armenia ed il Governo della Repubblica Italiana sull'autotrasporto internazionale di passeggeri e di merci, fatto a Yerevan il 7 agosto 1999 (di seguito denominato Accordo):

Articolo 1

Aggiungere un nuovo quarto comma 4) all'articolo 11 dell'Accordo così formulato:

"4. In caso di trasporto di merci effettuato da un complesso veicolare di due veicoli (autocarro che traina un rimorchio o trattore stradale che traina un semirimorchio) è possibile usare l'autorizzazione anche per uno solo dei due veicoli che compone il complesso veicolare (per il veicolo motore o per il veicolo trainato) a condizione che tutti i veicoli coinvolti siano registrati nel territorio di una delle Parti contraenti. Nel viaggio di ritorno è possibile sostituire il rimorchio (o il semirimorchio) indicando il suo numero di targa sulla autorizzazione accanto al numero di targa del rimorchio (o del semirimorchio) usato nel viaggio di andata".

Articolo 2

Sostituire il secondo comma dell'articolo 25 dell'Accordo con il seguente:

"2. Le Autorità competenti delle Parti contraenti incaricate dell'attuazione del presente Accordo sono:

Per il Governo della Repubblica di Armenia:

il Ministero dei Trasporti, delle Comunicazioni e delle Tecnologie Informatiche per il

Governo della Repubblica Italiana:

il Ministero delle Infrastrutture e dei Trasporti."

Articolo 3

Il presente Protocollo e l'Accordo verranno attuati nel pieno rispetto delle leggi e dei regolamenti nazionali di entrambe le Parti Contraenti, nonché in conformità con il diritto

internazionale applicabile, con gli obblighi assunti nel quadro delle organizzazioni internazionali di cui le Parti Contraenti sono membri e, per la Parte italiana, con quelli derivanti dall'appartenenza all'Unione Europea.

Articolo 4

Questo Protocollo costituisce parte integrante dell'Accordo ed entra in vigore dal primo giorno che segue la data di ricezione dell'ultima notifica con cui le Parti Contraenti si saranno comunicate ufficialmente l'avvenuto espletamento delle procedure interne necessarie per la sua entrata in vigore.

Fatto a Jerevan, il 31 luglio, 2018, in due originali, ciascuno in lingua armena, italiana e inglese, tutti i testi facenti egualmente fede. In caso di divergenza di interpretazione prevale il testo in inglese.

PER IL GOVERNO
DELLA REPUBBLICA DI ARMENIA




PER IL GOVERNO
DELLA REPUBBLICA ITALIANA



Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2018թ. հուլիսի 31-ին ստորագրված ««Հայաստանի Հանրապետության Կառավարության և Իտալիայի Հանրապետության Կառավարության միջև ուղևորների և բեռների միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումների մասին» 1999 թվականի օգոստոսի 7-ին ստորագրված Համաձայնագիրը» փոփոխող արձանագրության՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարության
միջազգային պայմանագրերի և
իրավունքի վարչության պետ՝




Սաթենիկ Աբգարյան